ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019թ. N 501-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի՝ որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնի անձնագրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 16
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019թ. N 502-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 71-Ն որոշման հավելվածի NN 2, 3 և 6 հատվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 16
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2019թ. N 503-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ Բ-12 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Նարինե Ավագի Ադիյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Նարինե Ավագի Ադիյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս Բ-12 շենքի 3 բնակարանի (վկայական N 10122019-07-0131, տրված 2019 թվականի դեկտեմբերի 10-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս 6 շենք 3 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2019թ. N 504-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Արմեն Ալբերտի Պոռզյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/92 (ծածկագիր՝ 07-003-0037-0029, վկայական N 27082019-07-0067) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 2 (երկու) հարկանի հասարակական նպատակային նշանակության հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով Արմեն Ալբերտի Պոռզյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2Արմեն Ալբերտի Պոռզյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 15000 (տասնհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք, ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2019թ. N 505-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Մարիետա Աշոտի Ավանեսյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Մարիետա Աշոտի Ավանեսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնք Բյուրեղավան քաղաք Սարալանջ թաղամաս 1-ին շարք թիվ 32 հողամասի (վկայական N 26112019-07-0123, ծածկագիր 07-003-0040-0071, տրված 2019 թվականի նոյեմբերի 26-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին փողոց 32:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2019թ. N 506-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՌԻՍԿԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 101-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 29-րդ կետը, Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N ՆԱԿ-11/19 նիստի որոշումը՝ որոշում եմ.

1.Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2020 թվականի ռիսկի չորս ընտրանքային չափորոշիչները՝ հետևյալ կազմով.

1) նշանակալիություն,

2) ֆինանսական ազդեցություն,

3) ստացված ֆինանսավորման չափ,

4) փոփոխությունների մակարդակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2019թ. N 507-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Մանուկ Ռուբենի Հակոբյանի (լիազորագիր 50 ԱԲ 3362358) հայտը՝ որոշում եմ.

1.Տաթևիկ Ռուբենի Հակոբյանին և Տիգրան Պարույրի Արշակյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահակատագծային առաջադրանք)՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15/34 (ծածկագիր՝ 07-003-0037-0163, վկայական N 16082018-07-0066) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 2 (երկու) հարկանի հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Տաթևիկ Ռուբենի Հակոբյանին և Տիգրան Պարույրի Արշակյանին ՝
1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,
2) կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 19
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2019թ. N 508-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 15 ՇԵՆՔԻ 30 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Գարիկ Վալերիկի Աթայանի դիմումը՝ որոշում եմ.

1.Գարիկ Վալերիկի Աթայանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 15 շենքի թիվ 30 բնակարանի (վկայական 0167241, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15 շենք 30 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 20
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2019թ. N 509-Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 10-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143–Ն հրամանով հաստատված հավելվածի 77-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 25-րդ և 26-րդ կետերը՝ որոշում եմ.

1.Վավերացնել Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020–2022 թվականների ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելված N1-ի:

2.Վավերացնել Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 20
ք. Բյուրեղավան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 501-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդականին (այսուհետ՝ խորհրդական) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2. Խորհրդականը անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:
3. Խորհրդականի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի հայեցողական պաշտոն զբաղեցնողներից մեկը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:
4.Խորհրդականը՝
ա) կատարում է համայնքի ղեկավարի հանձնարարականները.
բ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, համայքնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.Խորհրդականը՝
ա) մասնակցում է համայնքի հիմնախնդիրների լուծմանը, համայնքի ղեկավարի որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

6. Խորհրդականը՝
ա) իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի համայնքային ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հետ.
բ) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին (խորհրդակցություններին).
գ) աշխատակազմից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին,

գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

7. Խորհրդականը՝

ա) համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ:

6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Խորհրդականը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և լրացել է նրա 30 տարին.

բ) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Խորհրդականը՝

ա) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը.

բ) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

գ) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

դ) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

ե) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

զ) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

Խորհրդականն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Հավելված N 1
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի դեկտեմբերի 16 –ի N 502 - Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Տարե կան	Փոփոխ. + / -	Տարի
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	85335,0	-500,0	84835,0
08	2	4	Այլ մշակույթային կազմակերպություններ	3700,0	+500.0	4200.0

Հավելված N 2
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի դեկտեմբերի 16 –ի N 502 - Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 71 -Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդ ված	Տարե կան	Փոփոխ. + / -	Տարի
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5207,0	+450,0	
4264	Տրանսպորտային նյութեր	4264	2500,0	-500,0	2000,0
4267	Կենցաղային նյութեր	4267	1000,0	+500,0	1500,0
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1400.0	-450.0	950.0

Հավելված N 3
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի դեկտեմբերի 16 –ի N 502 - Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդ ված	Տարե կան	Փոփոխ. + / -	տարի
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, որից		85335,0	-500,0	84835,0
			Տրանսպորտային նյութեր	4264	2500,0	-500,0	2000,0
08	2	4	Այլ մշակույթային կազմակերպություններ, որից		4000,0	-300,0	3700,0
			Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2500,0	+450,0	2950,0
			Կենցաղային նյութեր	4267	500,0	+500,0	1000,0
			Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	700,0	-450,0	250,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
N15 19 դեկտեմբերի 2019 թ.

Տրված է կառուցապատող Արմեն Ալբերտի Պողոսյանին (ք. Բյուրեղավան Ջ. Անդրանիկի փ. 27շ.6բն. բնակիչ), հեռ.093664554 -ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց 27/92 (ծածկագիր՝ 07-003-0037-0029) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 2 (երկու) հարկանի հասարակական նպատակային նշանակության հասարակական սպասարկման օբյեկտ
Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

(II կատեգորիա) օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Աշխատանքային նախագիծ», «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (լիցենզիա՝ N 13389) կողմից.
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) ___.___.____թ. N___ փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
(նշել փորձաքննության տեսակը)

կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ Երաշխավորագիր N443 տրված22.11.2019թ.
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների Բյուրրեղավան համայնքի, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն, «ՀԱՅԵԼՑԱՆՑ» ՓԲԸ, «գեղամա» մասնաճյուղ, «Նաիրի» էլեկտրական ցանցեր, Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ -ի հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 24 (քսանչորս) ամսվա ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[] ավարտական ակտի տրամադրումից---------- ամսվա ընթացքում
[+] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14 թերթից, կարված և

դրոշմակնքված է _____Բյուրեղավանի համայնքապետարանի_____ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)
_____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու _____ և այլ
մարմնի (նշել իրավասու մարմնի անվանումը)
շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
_____
_____ :
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա
_____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)
_____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Հեռ. 022265205

ՁԵՎ N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
N 20 19 դեկտեմբերի 2019թ.

Օբյեկտ 2 (երկու) հարկանի հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը
նախագծային փաստաթղթերի մշակման համար:
«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա),
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15/34 (ծածկագիր՝ 07-003-0037-0163) հասցեի հասարակական կառուցապատման հողամաս
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Տաթևիկ Ռուբենի Հակոբյան, Տիգրան Պարույրի Արշակյան (ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառ փողոց 9շ.33բն. բնակիչներ), հեռ.095222888,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականաության վկայական N16082018-07-0066
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կառուցապատման հայտ, հողամասի հատակագիծ օբյեկտի առաջարկվող տեղանշմամբ, էսքիզային նախագիծ,
կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության , հասարակական կառուցապատման տարածք,
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում,դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ծածկագիր 07-003-0037-0163, 0.007354հա. հող



	Կոորդինատներ	
	X	Y
1	8465575.9315	4464398.4067
2	8465571.0589	4464408.6672
3	8465572.4488	4464409.3240
4	8465576.9714	4464411.3592
5	8465581.8469	4464401.0842
6	8465577.3309	4464399.0732

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը — ազատ, հարթ, անբարեկարգ տարածք
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — համայնքային նշանակության ճանապարհ , Վազգեն Սարգսյան փողոց
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) — հարակից տարածքով անցնող՝ ստորգետնյա մալուխ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման,էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — համայնքային սեփականության հող, ճանապարհ, (հարևաններ ծածկագրերով)
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — ----------
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ — նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի, տանիքի գույն RGB RAL 159-51-33 3016 49/31980 ՝ ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ
(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — *Ապահովել փողոցի կառուցապատման գիծը*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — ----

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) — սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) H=7.85մ. միջև տանիք . H=6.6մ. միջև երկրորդ հարկ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — 0.98776

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) — 98.776%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) — մինչև 1.224-%

9.7. այլ պահանջներ — տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը — ----------

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների — ----------

օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է **«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն**
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է «ՀԱՅԵԼՑԱՆՑ» ՓԲԸ, «գեղամա» մասնաճյուղ, «Նաիրի» էլեկտրական ցանցեր
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է _____
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ — _____

12.6. աղբահանություն — Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — «Բյուրեղավան կանաչապատում և բարեկարգում» ՀՈԱԿ կազմակերպել ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — Քար,Երկաթ/բետոն, տուֆ, բազալտ, կոպտատաշ քարե շար, մետաղ, ապակի, փայտ , ավազ, թիթեղ և այլն ըստ համաձայնեցված նախագծի
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ — շինարարության ընդացքում ցանկապատել տարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — _____

19. Շրջակա միջավայրի պահպանում — *չիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի*
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — *ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչնդոտ հանդիսացող պայմաններ*
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — *«Աշխատանքային նախագիծ» , 12 (տասներկու) ամիս*
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ. Ղ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հեռ. 0222 6 52 03

Հավելված N 1
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019թվականի դեկտեմբերի 20-ի N 509 - Ա որոշման

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝
_____Ն.ՄԱՐԿՈՍՅԱՆ
«20» դեկտեմբերի 2019թ.

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի առաջին տարի՝ 2020
Ծրագրի վերջին տարի՝ 2022
Ներածություն

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների,Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ: Այն հանդիսանում է Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Բյուրեղավանի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Բյուրեղավան համայնքի ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի անդամների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

Ներքին աուդիտի ստորաբաժանման առաքելությունը և խնդիրները

Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Բյուրեղավանի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Բյուրեղավանի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաքելությունն ու խնդիրներն են.

1)օժանդակել Բյուրեղավանի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2)օժանդակել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3)տրամադրել վերահսկող մարմիններին Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4)օժանդակել Բյուրեղավան համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5)իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6)ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

Ռազմավարական ծրագրի կազմման հիմքերը

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի միավորների կողմից ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

Համայնքապետարանի գործունեության ուսումնասիրության իրականացման նպատակով ներքին աուդիտի բաժինը օգտվել է նաև Բյուրեղավան համայնքի 2018-2022թթ զարգացման ծրագրից:

Ներքին աուդիտի ստորաբաժանման կազմակերպումը և հետագա զարգացումը

Բյուրեղավանի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից: Բաժինը կազմված է մեկ հաստիքային միավորից՝ ներքին աուդիտի բաժնի պետ:

Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար բաժինն իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում:

Աուդիտի բաժնի պետը 2018թվականին որակավորվել է, 2019թվականին մասնակցել է Լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին:

Ներքին աուդիտի բաժնի համար անհրաժեշտ են հետևյալ տեխնիկական ռեսուրսները՝

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովում (համակարգչային տեխնիկա և ծրագրերի ձեռքբերում, ծրագրավորում և սպասարկում),

2) գործուղման ծախսեր (փոխադրավարձ, օրապահիկի և գիշերավարձի ծախսեր),

3) այլ ծախսեր(գրենական պիտույքներ):

Տեխնիկական ռեսուրսների հաշվարկը անհրաժեշտության դեպքում կարելի է իրականացնել եռամսյակային կտրվածքով:

Միավոր	Տարի	Ժամկետ (օր)	Աուդիտի տեսակ	Խոր հրդա տվության տեսակ	Ռիսկի խումբ
Բյուրեղավանի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց	2020	30	Համապատասխանության աուդիտ		Բարձր
Բյուրեղավանի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց	2021	30	Համապատասխանության աուդիտ		Բարձր
Բյուրեղավանի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց	2022	30	Համապատասխանության աուդիտ		Բարձր
«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2020	23	Համապատասխանության աուդիտ		Բարձր
«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2021	23	Համապատասխանության աուդիտ		Բարձր
«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2022	23	Համապատասխանության աուդիտ		Բարձր
Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և Կանաչապատում» ՀՈԱԿ	2020	30	Կատարողականի աուդիտ		Միջին
Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և Կանաչապատում» ՀՈԱԿ	2021	30	Կատարողականի աուդիտ		Միջին
Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և Կանաչապատում» ՀՈԱԿ	2022	30	Կատարողականի աուդիտ		Միջին
Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին	2020	23	Ֆինանսական աուդիտ		Ցածր
Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին	2021	23	Ֆինանսական աուդիտ		Ցածր
Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին	2022	23	Ֆինանսական աուդիտ		Ցածր

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2020	23	Համապատասխանության աուդիտ		Բարձր
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2021	23	Կատարողականի աուդիտ		Բարձր
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2022	23	Կատարողականի աուդիտ		Բարձր
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկ	2021	11	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2020	23	Կատարողականի աուդիտ		Ցածր
«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2021	23	Կատարողականի աուդիտ		Ցածր
«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	2022	23	Կատարողականի աուդիտ		Ցածր
ՀՀ կոտայքի մարզի « Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ	2021	23	Համապատասխանության աուդիտ		Ցածր
Բյուրեղավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների գործառույթներ	2020	24	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
Բյուրեղավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների գործառույթներ	2021	24	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
Բյուրեղավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների գործառույթներ	2022	24	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2020	23	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2021	23	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2022	23	Համակարգի գնահատման աուդիտ		Ցածր

Հավելված N 2
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019թվականի դեկտեմբերի 20-ի N 509-Ա որոշման

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝
----------Ն.Մարկոսյան
« 20 » դեկտեմբերի 2019թ.

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարի 2020

Ներածություն

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների :

2020թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա:

Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի բաժնի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2020թվականի ընթացքում:

Տարեկան ծրագիրը սահմանում է 2020թվականի ընթացքում Բյուրեղավանի համայնքապետարանում իրականացվող առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

Ներքին աուդիտի ստորաբաժանման դերը և նշանակությունը

Ներքին աուդիտի 2020թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել ներքին աուդիտի բաժնի ռեսուրսների և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտի բաժինը ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը

Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտի բաժնի պետը մշակել և Բյուրեղավան համայնքի ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացրել 2020թվականի Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտի բաժնի պետի կողմից և վավերացվում Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից:

Ներքին աուդիտի ստորաբաժանման հետ փոխկապակցված գործունեության տեսակները

Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

ա) շարունակական մասնագիտական վերապատրաստումը,

բ) ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցությունը,

գ) ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

Ներքին աուդիտի բաժնի աշխատանքների կազմակերպումը

Բյուրեղավանի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից: Բաժինը կազմված է մեկ հաստիքային միավորից՝ ներքին աուդիտի բաժնի պետ:

Հաշվետվությունները

Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ Բյուրեղավանի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և Բյուրեղավան համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Բյուրեղավան համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի բաժնի գործունեությունը:

Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Բյուրեղավան համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

Ներքին աուդիտի բաժնի պետը ներքին աուդիտի բաժնի ստեղծման, վերակազմակերպման կամ փոփոխության դեպքում պետք է Լիազոր մարմնին ներկայացնի հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 1-ին ձևով՝ ներքին աուդիտի ստորաբաժանման գրանցման, վերակազմակերպման կամ փոփոխության վերաբերյալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի հրամանի ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարմնին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով:

Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են նաև կազմում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

Հ/Հ	Միավոր	Աուդիտի տեսակ	Խորհրդատվության տեսակ	Պլանավորված օրերի քանակ	Սկզբի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ	Գործընթաց	Կցված աշխատակից	Պաշտոն	Ընդամենը մարդ/օր
1	«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	Համապատասխանության աուդիտ		23	01/01/2020	31/12/2020	Քաղաքաշինության բնագավառի գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	8
							Համայնքի տնտեսական զարգացման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	7
							Սոցիալական ծառայությունների գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	8
2	Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին	Ֆինանսական աուդիտ		23	01/01/2020	31/12/2020	Բյուջետավորման գործընթաց	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	8
							Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	8
							Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	7

3	Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և Կանաչապատում» ՀՈԱԿ	Կատարողական աուդիտ		30	01/01/2019	31/12/2019	Բարեկարգման, կանապապատման, փողոցների էլեկտրալուսավորման, կանաչ տարածքների, այգիների ու փողոցների մաքրման գործընթաց	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	15
							Կենցաղային և ոչ կենցաղային աղբի հեռացման աշխատանքների կատարման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	15
4	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	Համապատասխանության աուդիտ		23	01/01/2020	31/12/2020	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	23
5	«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	Կատարողական աուդիտ		23	01/01/2020	31/12/2020	Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցման գործառույթ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	23

6	Բյուրեղավանի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց	Համապատաս-խանության աուդիտ		30	01/01/2020	31/12/2020	Գնման ընթացակարգ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	18
							Պայմանագրերի կատարման ընթացակարգ	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	12
7	Բյուրեղավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների գործառույթներ	Համակարգի գնահատման աուդիտ		24	01/01/2020	31/12/2020	Բնակավայրի տարածքում հանրային ծառայությունների մատուցում և դրա մասին տեղեկությունների ներկայացում համայնքի ղեկավարին	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	24
8	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Համակարգի գնահատման աուդիտ		23	01/01/2020	31/12/2020	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Նինա Մարկոսյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	23